ԱՐԱՐԻՉ

ՏԸՆԴԻՍ

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ՊՕԼՈՍՅԱՆ, ՄԻՈՒԹՅԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՅԱՆ

Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 10. 1862 ՄԱՅԻՍ 15.

ԸՆԴԱՑԻՔ

ԸՆԴԱՑԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Բաւական տարիէ ի վեր Հայոց Ա. Աթոռին մէջ մեծ շարժուար մը կայ, որուն միայն նպատակն է Ա. Աղգը օրինքով կառավարել, Բ. Դրան հնարհաց պաշտօնեաները ըստ կանոնի վարել։

Ա. Աղգը անկասկած կերպով ունեցած պարտութենէն զգուած, (ոչ թէ նոյն ժամանակի ունեցած ժողովականներէն, այլ նոցա Ա. Աղգը վարելու կերպէն) և քիչ շատ յառաջ երթալով հասկցաւ որ Բ. Դրան առ Ա. Աղգս հնարհաց պաշտօնեաները ըստ օրինի վարելն իր առաջին պարտաւորութիւնն է, և առ Օսմանեան Տէրութեան ունեցած հաւատարմութեանն մեծ նշանն է. ուստի աչքատեցաւ, շատ անգամ պարապը եղաւ, բայց չվհատեցաւ, զի վերջապէս այն ամէն խոչնդոտները յաղթելով և ունեցած արտօնութիւնները միաւորելով Օրինաց գիրը մը խմբագրեց և կոչեց զանիկա Սահմանադրութիւն։ Ուստի Սահմանադրութիւն բսելով ուրիշ բան չենք կրնար հասկընալ, բայց եթէ Բ. Դրան առ Հայս իսկզբանէ տուած Պաշտօնեաներու Բովանդակութիւնը։ Որովհետև Սահմանադրութիւնս կազմուած Ա. Աղգային Վարչութիւնը սա սկզբանէն վերայ հիմնեալ յարաբերութիւն մը ունի Ա. Աղգինհետ, Արարատեան մայր Աթոռին հետ, Բարձր Դրան հետ։ "Ա. Աղգին և ազգայնոց հետ՝ միշտ հայրաբար վարուիլ. Արարատեան մայր Աթոռին հետ՝ առանց դադար ջնալ միշտ նոյն յարաբերութեանց որոնցմով նախնեացմէ անտի

կապուած են իրարու հետ Ա.զգն՝ ու Ա.թոռը ,, ։

" Բ . Դրան հետ՝ թէ Ա.զգին և թէ ազգայնոց կրօնական ու քաղաքական իրաւունքները պաշտպանելու համար Տէրութեան պաշտպանութիւնը խնդրել , և Ա.զգին հպատակութիւնը հաստատիմ պահել առ Տէրութիւնը ,, ։

Օրինաց գիրը կամ Սահմանադրութիւնը խնդրեցաւ , վաւերացաւ և ստորագրուեցաւ ։ 1861 Մայիս 24ը՝ Հայոց համար մեծ օր եղաւ , զի այն օրը Ա.զգը ունեցաւ Օրինաւոր Վարչութիւն մը։ Ա.զգը մեծ յոյսեր կակնկալէր անտի Ա.զգային յառաջադիմութեան նպատակաւ , վասնզի Ա.զգային Սահմանադրութեան հիմնական սկզբունքն էին ։

" Ա. Ա.զգին ամէն մէկ անհատը առ Ա.զգն պարտաւորութիւններ ունի . Ա.զգն ալ իր կողմէն առ ազգային ամէն մէկ անհատ պարտաւորութիւններ ունի . զարձեալ ամէն մէկ անհատ իրաւունքներ ունի Ա.զգէն և Ա.զգն անհատներէն ,, ։

" Ա.յս պարտիքներն որոշել և այս իրաւունքները հաստատով իշխանութիւնը Ա.զգային Վարչութիւն կկոչուի , որում Օսմանեան Տէրութենէն յատուկ արտօնութեամբ յանձնեալ է Տաճկաստանու Հայոց նիզքին գործոց տնօրինութիւնը ,, ։

" Բ . Ա.զգային Վարչութիւնը հիմնեալ է իրաւանց ու պաշտեաց սկզբունքին վրայ , որ արդարութեան սկզբունք է . իր ոյժը ձայնից բազմութեան մէջ կկայանայ , որ Օրինաւորութեան սկզբունք է ։ Ա.մենայն տնօրէնութիւն ազգային որ չէ համաձայն սոյն սկզբանց , ոչ արդար է և ոչ օրինաւոր ,, ։

" Գ . Ա.զգն ու ազգային Վարչութիւնը փոխադարձ պարտիքներով կապուած են իրարու հետ ,, ։

" Դ . Ա.զգայնոց պարտականութիւնն է՝ Ա.զգին պիտոյիցը պահանջած ծախքերուն մասնակից ըլլալ իւրաքանչիւրը իր կարողութեան չափովը , Ա.զգին ընդրած ծառայութեանցը յանձնառու ըլլալ և ազգային վարչութեան ըրած տնօրէնութեանցը ազգասիրաբար հնազանդիլ ,, ։

" Ե . Ա.զգային Վարչութեան պարտականութիւնն է՝ Ա.զգին բարոյական , մտաւորական և նիւթական պիտոյիցը հոգ տանիլ , Հայաստանեայց Ս . Եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւնները անխախտ պահել , մարդկութեան հարկաւոր եղած անհրաժեշտ գիտելեաց ուսումը Ա.զգին ամէն աստիճանի թէ՛ մանչ և թէ՛ աղջիկ տղայոց հաւասարապէս ծաւալել , ազգային հաստատութիւնները պայծառ պահել , Ա.զգին հասոյթները օրինաւոր կերպով աւելցնել և ծախքերը իմաստութեամբ տնտեսել , Ա.զգին ծառայութեանը մշտնջենաւոր նուիրեալ անձանց կացութիւնը լաւցնել և ապագան անդորրել , կարօտելոց խնամատանիլ հայրաբար , ազգայնոց մէջ ծագած վէճերը արդարութեամբ խաղաղել , և վերջապէս Ա.զգին բարեկարգութեանն ու յառաջադիմութեանը աշխատութիւն չխնայել ... ,, ։

Ա.հա սոյն վերոյիշեալ սկզբանց վրայ խնջագրեալ Սահմանադրութիւնը խաղաղութեամբ տարիի մի չափ իր պաշտօնն վարեց . ամէն թազ Սահմանադրութիւն իր Օսմանեան խորհուրդներն ներկայացուց . Քաղաքական ժողովն իր յարաբերութիւններն ըստ օրինի ունեցաւ Բ . Դրան հետ . բայց շատ չանցաւ Ս . Երուսաղէմայ խնդիրն բոլոր աշխարհ տակնուվրայ ըրաւ , Ա.զգին մէջ մեծ վրդովմունք մը մնաւ , որնոր առիթ եղաւ Հայերուն իրար թշնամանելուն , ատելուն , երկու եղբարց մէջ նենգ ու սիմնաւ , գլուխներն տաքցան , գրիչներն

տաքութեամբ պատեպազմեցան, Ա.զգին մեկուկէս տարուան մէջ վաստկած սերն ու միութիւնը բոլորովին ջնաջինջ ը-ղաւ, ամեն անհատ իր խելքին փշածը ընել սկսեց. Երեսփոխանք իրենց ուխ-տը մոռցան, Պատրիարքը իր ստորագ-րութիւնը տրացաւ, ուսկից եռքը կը-ռիւը մեծցաւ: Պատրիարքը այս ամեն դէշութեանց պատճառ Համարուելով զժուարաւ ոտիոտն վար առնուեցաւ, Եկեղեցիներու մէջ նորին Սրբութեան անունը չյիշուելու առաջարկութիւն մը ծնաւ, ինչպէս որ մինչև այսօր անսովո-րաբար կրճատբեաւ Պաորէարտ կ'իշուի. ահա այս երկու բառերը բոլոր Հայ սիր-տերը կը խռովեցնէ, յիշեցնելով իրեն ունեցած Սահմանադրութեան քաշած տառապանքները, Հալածանքը: Գլուխ-ները երթալով աւելի տաքցան, 1862 Մայիս 24, երկրորդ Տարեդարձէն մէկ ամիսի չափ առաջ Սահմանադրութիւնը Ր. Դրնէն պիտի վաւերացուի ըսելով մինչև Մայիսի 23 երեքշաբթի օրը սպասուե-ցաւ, բայց երբոր աղդայնոց այս յոյսն ալ պարապ ելաւ, անպատրաստից նոյն օրը դարձեալ ի Հիւանբեար Յակէլեսի Սահ-մանադրութեան երկրորդ Տարեդարձը կատարեց (միևնոյնը կատարուեցաւ նաև յԱլեմ տաղն Հալէպին աւելի ազ-գայնոց ներկայութեամբը). ատոնք բա-ւական չհամարուելով երկու ամսոյ չափ տռանձին աւելի տարեդարձներ եղան զա-նազան թաղերու մէջ: Ա.յս գրութեամբ բաւական ծախս ըլլալին վերջը, և գործ-եալ Սահմանդրութեան անպօրծադրու-թիւնը տեսնուելով, անստորագիր յայ-տարարութիւններ, բողոքներ հրատա-րակուեցան, ատոնց և ոչ մեկուն ո՛չ պա-տասխան և ո՛չ զանոնք գրողին կամ հրա-տարակողն փնտռող եղաւ. Նոյն միջո-ցին Ա.զգն Ներկայացնող Երեսփոխանք քննցան և ինչպէս մինչև այսօր գեռ կ'քը-ննուին. առանցմով ալ երբ օգուտ մը չը-քաղուեցան, աւելի զօրաւոր միջոցներ և որոշումներ երևան եկան: ինչպէս 1862 օգոստոս 1ին խումբ մը Հայեր Մայր ե-կեղեցին ժողովեցան և քանի հոգիէ չափ պատգամաւոր ընտրելով Պատրիար-քարան առաջնորդեալ վարչութեան խառն ժողովոյ խաբերեցին զԱհմմանադ-րութիւնը խնդրելու. Խառն ժողովը օ-րինաւոր պատասխան տուաւ, պատգա-մաւորք ևս չնորհակալ ըլլալով իրեն ե-ղերութիւնը պատմեցին, բայց ժողո-վուրդը այս սոսկ խօսքերու հաւատար-մութիւն չընելով ստորագրութեամբ խոստումն պահանջեց, որոյ համար պատ-գամաւորք գարձեալ խառն ժողովոյ կը ներկայանան և վերոյիշեալը կատարյա-կեն. Խառն ժողովոյ Աւետարանչ Կիւ-րոնակ Պէյը սիրով կընդունի և պէտք եղած ստորագրութիւնը կուտայ. պատ-գամաւորք կըխնդրեն որ Տեղապահ Սրբ-բազանն ալ նոյն խոստմնագիրը վաւերա-ցընէ իր ստորագրութեամբը. բայց գործ-բազատաբար կը մերժէ. ասոր վրայ գը-լխներն արդէն տաք, Եկեղեցին մէջ գանուողներն ամենքն մեկին Պատրիար-քարան կըդիմեն, ժողովականաց Հաւ-րըն մնանելով դուրս կըհանեն և Պատ-րիարքարանի դուռներն կըզոցեն: Այդ միջոցին Սեիմ փաչան կուգայ բազմա-թիւ ոստիկաններով և գամեները յորդո-րելով կցրուէ, Պատրիարքարանէն ուղ օ-րի չափ պոյ մնալէն յետոյ գարձեալ ե. Դրան կողմանէ կըսպասուի և խառն ժողո-վը իր գործը կըսարունակէ, Թէսկեր ցա-ւօք սրտի:

— Ա.յս միջոցին աւեն Թաղին մէջ ծագած երկպառակութեանց, գժտու-թեանց և կռիւներու օրինակներն մի առ մի յոռաչք բերելն աւելորդ Համա-րելով, Ա.զգին սա ներկայ գառն վիճա-կին Համառօտ կերպով նկարագրելն պատեք կհամարիմ.

Հայ Ա.զգը Թշուառ, աղքատ, մե-

Ազգային հիմնարկութիւնք երեսի վրայ, Ազգին պարտքը օրըստ օրէ կաւելնայ, խեղճ պանդուխտը խոներու անկիւնը հիւանդ, հեռու իրենց հայրենիքէն, հեռու իրենց ընտանիքէն և վերջապէս հեռու իրենց զաւակներէն, հազար ու մէկ հառաչանքներով, ցաւօք և արտասուօք, մէկ խօսքով անօգնական ձնալով կմեռնին։

Այսոնք ալ բաւական չէին, այսօր Կեսարիոյ կողմին, վաղն Միւս տեղ հայերը կնեղուին, Պաղէշխիւլ Հայերն անհանգիստ կմեռնին, Ալապաշի Հայերն կհալածուին, կոպտանուին, իրենց անմեղ արիւնովը գետինը կկարմրցնեն, Ուշնեցիք կկոտրուին, Սարաշի Հայերն կնախատուին, կհալածուին, Հայերն իրենց տուներէն կլքնտուին, ինչ, ստացուածք, պարէն կկողոպտուին, և կեզեցի կքանդակուի, վանք հիմնահատակ կըլլայ, Վարդապետ, Քահանայ յանկարծակի Թրէ կանցնին, շուն մը կտոր կտոր ըլլուելով անոնց վրայ կնետուի։ Նոյն կողմի Հայերն Օսմանեան տէրութեան գիտութիւնը խնդրելու համար դեպի Կ. Պոլիս ճամբայ հանած պատգամաւոր վարդապետ մը կբռնուի և մեկհայնելով մազերէն քանած բոլոր փողոցներն կքաշքշուի, մարմինը կջարջարուի, հազար ու մէկ խոպաճ մէկ փարայի։ Անմեղ կիներ, համեստ մայրեր, սուրբ օրիորդներ օտարաց գիրկը յանձնել և իրենց նախատինս Աղգիս կտեսնուի. վերջապէս այսքան չարչարանք, նեղութիւնք, հալածանք, սուր ու կրակ, սար ու կողպուտ ըլլալէն վերջը մենք դեռ մէկմէկ կնախատինք, կանարգինք։

Հայեր, եղբայրներ բաւական Թող ըլլան մեր իրարու մէջ ունեցած այս անմիաբանութեան ազգակործան արդիւնքները, բաւական Թող ըլլան այն խումբ մը անմեղ ազգայնոց արիւնը, սպպայ սերունդը մեզ դատախազ պնդապան մասը մարդուս սիրտը հալեցնող ու մաշեցնող աշխատութեանց տակ ընկճուած, շատ կողմեր ո՛չ Եկեղեցի, ո՛չ Քահանայ և ո՛չ գպրոց ունի։ Ազգը այս ամէն գէշութիւնները և անտի ծագած ու ծագելիք ազգակործան հետեւութիւնները ամենայն կերպով հասկընալով շատ ջանք ըրաւ, գիշեր ցորեկ աշխատեցաւ ճարմը, գարմանն մը գտնելու, երկպառակութեան սգին բնաջինջ ընելու, սէրն ու միութիւնը Ազգային ամեն տեսակ գործոց առաջնորդ ընելու։

Բայց ի՞նչ — անմիաբանութիւնը բոլոր իր ուժովը տիրեց և ի՞նչ ըրաւ—։

Թաղական խորհրդոց մեծագոյն մասը իրենց պաշտօնը ըստ օրինի չկատարել սկսան, անոնցմէ որ մէկն անտարբերը, որ մէկն չեղոք, որ մէկն անզգայ, որ մէկն գժտութեան պատճառ եղան և որ մէկն իրենց պաշտօնը առանց իրաւանց դադրեցուց։ Սանկով շատ Թաղ գտնուող խեղճ աղքատները երեսի վրայ անօգնական չգիտեն ուր դիմեն, Պ՛տրիարքարան — պատասխան չկայ. Թաղական խո՞րհրդին — մարդ չգտներ ուզածն խնդրելու, բողոքելու։

Հայաբնակ շատ կողմեր յետին խեղճութեան մէջ, աղգովին օգնութիւն մը չգտնելուն, կտիպուին իրենց ընտանիքը, խեղճ զաւակնին երեսի վրայ ձգելով, ծառայութեան երթալ օտար երկիրներու մէջ. 14, 18, և շատ մեծը 25 տարեկան սուրբ, համեստ կանայք դեռ իրենց մէկ տարեկան չափած կաթնատու տղայքներն ուրիշներու օգնութեան յանձնելով ցաւօք և արտասուօք, օտարներու զաւակներն ինամելու կտիպուին, ամին 50, 60 ղուրուշի համար։ Ոմանք յետին զբաղութեան մէջ և յուսահատեալ կրօնափոխութեան կերթեն, օգնութիւն մը գտնելու նպատակաւ։

տի ըլլայ , մեր վրայ անեծք պիտի կար-
դան : Ուստի Հայերս սրբենք զիրար , զրբ-
կենք զիրար , ձգենք մեկզի երկպառա-
կութեան աղգակործան ոգին , զի ա-
մենքնիս ալ մեկ եղբայր ենք , մեկ յոյս ,
մեկ արիւն , մեկ անուն ունինք , մե-
տածենք մեր Աղգին , մեր խեղճ Ազ-
գին դառն ու թշուառ վիճակը :

Իսկիւտարի սպրաֆ երբեմն Մի-
քայելի երկրորդ ամուսնութեան խնդի-
րը , Աղգը երեն նախատինք համարելով ,
ամբողջ Թաղմը տակնու վրայ եղաւ ,
պօռաց , դատաստան խնդրեց , Եկեղե-
ցւոյն քահանաները դուրս վռնտեց ,
Պատրիարքարան դիմեց , յատուկ յանձ-
նաժողով մը խնդրեց . հապա ոչ՞մ
ամօթ և նախատինք չպիտի սեպենք ,
երբ Հայ օրիորդներ , կոյսեր , սուրբ և
համեստ մայրեր օտարաց գիրկն կընկնք :
Սարգիս Պատրիարքը սահմանադրական
իր խօստմունքը ուրանալուն համար ,
բոլոր Աղգը տակնու վրայ եղաւ և կղե-
րին պատիւը պահելու և յարդելու հա-
մար վերջապես ամօռւէն վար առնուե-
ցաւ . ինչպէս ո՛րեմն չենք պարտաւո-
րիր Աղգովին աչխատիլ այնպիսի կեան
մը մէջ ուր վարդապետ , քահանայ նրս-
տած տեղերնին յանկարծակի թրկ
կանգնին և չան մը պիղծ կտորուանքը ա-
նոնց սուրբ կտորներուն հետ կխառն-
ուին . պատգամաւոր վարդապետ մը
մերկացնելով , փողոցներուն մէջ չա-
րաչար նախատինքներով կքաշքշուի :
Ս . Երուսաղէմայ վանքը ըստ օրինի վա-
րելու , անոր ծախքն ու եկամուտը բո-
լոր Աղգը իմանալու համար ազգային
Սահմանադրութիւնը ձեռնհաս կերե-
ւթայ , Աղգը տակնու վրայ կըլլայ . հա-
պա ուրեմն ի՞նչպէս Աղգն այսօր անտար-
բեր կրնայ մնալ երբ կտեսնէ որ իր
Վանքն ու Եկեղեցին, իրենց ստացուա-
ծօքը հիմնայատուկ կըլլան :

Սնոեաները Իսկիւտարի Սուրբ
Կարապետ Եկեղեցւոյ այն չինչ մասուն-
քին վրայի զարդերէն մեկը գողցուե-
լով և նոյն գողութիւնը սոյն Եկեղե-
ցիին քահանայներէն մեկուն վրայ կաս-
կածուելով , քահանայն Եկեղեցիէն կը
մերժուի , կամբաստանուի և Պատրի-
արքարան դատի կհրաւիրվի . հապա
ուրեմն ո՛րչափ իրաւունք ունի Աղգն
այսօր վնտռելու վերոյիշեալ Եկեղե-
ցիին և Վանուց կողոպտուած սուրբ ա-
նօթները որոնք Աղգիս պապիկն և Քրիս-
տոնէութեան էրաստներն էն :

Ուստի այսպիսի հիշուառ ժամանա-
կի մը մէջ Պատրիարքարանի առժամա-
կաց վարչութեան կառն ժողովական է-
թէ հրաժարուի , ի՞նչ կմնայ ընել աղ-
գայնոց :

Հա՛յեր , անտարբերութիւնը մե-
ղի շատ սուղ պիտի նստի , անմիաբա-
նութեամբ այս կերպով Աղգը բոլորո-
վին պիտի ջնջուի . վիճաբանութիւնք ,
պժտութիւնք , քէն , ատելութիւն և
Աղգին ոխերիմ թշնամին անհոգու-
թիւնը , մայր ամենայն չարեաց , մեր
բոլոր իրաւունքները պիտի կորսնցնեն :

Այսպիսի միջոցի մը մէջ պէտք է
որ կամ երեսփոխան միանան և կամ եկե-
ղեցականք՝ Աղգիս սա դառն վիճա-
կին ճարմը , դարման մը հոգալու շը-
նորհիւ Օսմանեան Բարեխոհամ կառա-
վարութեան :

Բ . Դուռը երբեք մեր օրինաւոր
բողոքը չմերժեր , այլ ընդհակառակն
սիրով ընդունելով պէտք եղածն կոր-
նօրինէ զի նա կսիրէ Հայը և իրաւունք
ունի սիրելու , զի Հայը հաւատարիմ
է և հաւատարմութեան մէջ միշտ մը-
նալու համար ի մէջ սուրբ եկեղեցւոյ
ուխտեալ է :

Ուստի Հայեր, Հայրեր, եղբայրներ ,
խելօնխա գլուխնիս ժողվենք , գիրար
սիրեմք , գրկենք զիրար , խորհիմք մեր
Աղգին այս թշուառ վիճակը և քիչ մ՚ալ

հեռատեսեմք թէ ո՛ւր պիտի երթայ և ի՞նչ պիտի ըլլայ այս ամէն գժտութեանց, վիճաբանութեանց, նախատանաց, ատելութեան, անտարբերութեան, չեզոքութեան, անզգայութեան ու անմիաբանութեան վախճանը. ասանկով մենք Հայերս մարդկային երբեակ պարտաւորութիւններն ալ կատարած չենք ըլլար, ոչ առ Աստուած, ոչ առանձն և ոչ առընկերն. Սուրբ Աւետարանի սկզբունքն ի՞նչ է, եթէ ոչ "սիրեցէք զմիմիանս": Եւ քանի որ մեր Ազգային Սահմանադրութիւնն ալ այս սուրբ սկզբան վրայ հիմնեալ է, հապա ուրեմն մեր Ազգին այս Թշուառ վիճակին դիակ դարման կրնայ ըլլալ, և պիտի ըլլայ Ազգային Սահմանադրութիւնը, բայց ոչ միայն անուամբ, այլ և գործադրութեամբ:

Տէր իմ Հանդիսապետ.

Հալէպ 14 Յունիս 1862.

Եթէ ժամանակ է պատուական Հայոց հազար ու մէկ ցաւերը հրատարակել, հաճեցէք ա՛ս մէկը ձեր պատուական հանդիսին էջերուն մէջ ու խիստ համառօտ է:

Ուրհայ նահանգին հերկժուկ գիւղաքաղաքը, որուն համար մէկ քանի արժանահաւատ անձերէ կը գրուի մեզ. և մանաւանդ ճամբորդներէ ալ կատարգինք, որ նոյն տեղն ազգայինք. ա՛յ եւ կեղեցի ունին և ոչ դպրոց: Թէպետ ասնոնով կայ մէկ քահանայ և մէկ վարժապետ՝ որ իւրեանց հոգևոր պաշտօնը երբեմն քաղքէն դուրս մէկ այրի մէջ կը կատարեն եղեր. նոյնպէս ալ անասնոց գոմ մը պղծոց են անուաներ, որուն մէջ նստիլը մարդոց համար անհնար է (ինչպէս Բերիոյ ազգային վարժարանը) քահանայն ատոնուհետեւ մէջ կո՞ւ գործելով իւր ապրուստը կը ճարէ. ժողովուրդը իրաւունք վճարելու պարտական չկրնալ ընելուն համար, իսկ վարժապետին 125 դահեկան ամսական խոստացուածը է ըսլը ծախքերը իւր վրայ ըլլալով. բայց եկուր տես որ նոյն չնչին գրաման ալ չորս—հինգ ամիս է իւրեր վճարող ըլլալուն, իրեն կտիպուի դպրոցը գոցելով երթալ Հռոմիական ըլլալ. արդէն կպղտացուցած և ապականացուցածն ի՞նչ ըլլալու է, քանի որ Հայերէն խօսիլ չգիտեր կրսեն: Այս ժողովուրդը բաժնուելով և հասնելով հինգ 80 տուն կը համրուի: Զենք գիտեր ճիշդ քա՞նի հոգի ըլլալնին. 5 հոգի ամեն մէկ տան հաշուելով հասանիկանի որ 400 հոգի կանուի, չորս հարիւր հոգւոյ մէկ քահանայ, որ պատարագ ալ չկրնար ընել եղեր՝ Ողորմեցի ըսող չըլլալուն, իւր ապրուստը չհոգան որ կտաւ գործելու ատիպուի. գանուղ վարժապետին իւր արժան չնչին վարձքը չվճարեն, որ սիրտը նեղացած ատեն կրօնափոխութիւն ընէ: Ի՞նչ անպատուութիւն ու վնաս չբերեր ազգին. չեմ գիտեր ես. Պօլսոյ կեդրօնական վարչութիւնը ատոնք լսելով անտարբեր կրնայ կենալ՝ վասն զի մեր սիրտերը կը ճմլէ: Զենք գիտեր, կսխալինք եթէ այս ամէն չարեաց պատճառ Սեծի առաջնորդները ճանչնանք: Ահա մէկը գեր" Գրիգոր եպիսկոպոսը որ առեղծուած Ընթեցաւ Հայոց կեանքն աւելին քաղքական ըսած (Հաւատացողը Տիգրանակերտի առաջնորդ պատկառելի Եպիսկոպոսին Թող Հարցնէ) և երբ ալ ընեվիլը չմնաց, Ձգեց Գիլլա անցաւ՝ ու եկեղեցւոյ շինութեան ազգակործան իրերդիրը յաջողացանելով չորս սպան կանգնեցուց և ժողովուրդը մերկացուց՝ որ հինգ երկուսի բաժնուելով: "Հաշիւ կուզենք" "չենք տար" ըսելով Սիկ հեռնը իրար առ. և Պայրամեանը անի

ըսաւ մեկզմեկու գլուխ կը պատռեն . ու մեր Աբդուլհամիտով կուսակալը Հալեպու ընդհաղաղաք եպիսկոպոսը կ՝ Պօլսոյ խրկուած ըլլալուն . . . տեղ գնելով և աղքը պատռելուզելով (եղուկ որ օտարը մեզ կպատռէ մենք մեկզմեկ կանպատռենք) քաւձրադոյն հրամանագրով իր ներկայացած գործը անոր կը յանձնէ . նա ալ փոխանակ իրաւունք ընելու Պայրամեանին կաշառուելով իր առաջին և վերջին խօսքը սա կըլլայ " պալ Թուխան հէլպէճ փարմաղընը եալար" Աւլահա հէվալէ էտին "և թէ " պէօյլէ պէօյիւք մատահէ 20 " 30 " ղուէմ սէյֆիէթի օլմուշ այը՞պ մը . և սա ալ այնպէս միամիտը որսալով մը որ չեմ կրնար նկարագրել , բայց ոչ ամէնը զի Հայոց շատին աչքը բացուեր է , խաղոյն ծանուցին կառավարութեանը և դարձեալ իր պատիւնալ պահելով՝ ու բարեբաղդութեամբ մեզ մեծապատիւ Քապուլի էֆէնտիին արդարակշիռ վճռոյն , որ այսօր Հալեպ կապաւոի , որ պերութէն կուգայ :

Եթէ ասոնք բաւական չէն Սեճի եպիսկոպոսաց գոյները ցոյց տալու , ահա մեկնալ կաւելցունեմք , և եթէ հարկաւորի՝ հազարն ալ :

Վերոյիշեալ Գրիգոր եպիսկոպոսը բաւական ժամանակ է Եգեսիա կզբաղնաւի , բայց ի՞նչ օգուտ , որ անտեղի եկեղեցին նոր և չքեղաշէն ըլլալուն չը կրնար օրօվայնը պարարտացնել՝ բայց ինչ կըսեմք , խորամանկին քան կպակսի , ահա շատ մը ռամկաց չարժառիթը վարուած եկեղեցւոյն տանկը կապարապատելու երթէ և ասալ պատրուակ մի ընելով կրկին օրինակ մահաբերները կինքել տուեր է շատ մը կնիքնուն բեռնակիրը եղող Հայոց , որ խրկուեցաւ՝ առ կ . Պօլսոյ վարչութիւն , ուրոց պարտնակութիւնն է նոյն չնորհաւորութեան հրամանագիրը և իրեն առաջնորդութեանը պերաթը և մինչև ցարդ ըրած ապօրինաւոր գործերուն տեղւոյն մեծապատիւ կուսակալը արդելք ըլլալուն անկէ ալ զանգատանաց զրպարտութիւններ՝ որոնք եթէ լսելի ըլլան վարչութեան՝ և գործի դրուին . ոչ թէ միայն արդարութեան հակառակ պիտի ըլլան , այլ քիլիսի մէջ ծագեցուցած կռիւները հոն ալ երևան պիտի ելլան . վասն որոյ կ՝փութամք իբրև Հայ մեր պարտքը կատարելով ճշմարտութիւնը անքող հրապարակը հանել . միանգամայն վստահ ըլլալով վարչութեան արթուն հսկողութեանը վրայ , որ ոչ թէ ասոնց թոյլտուութիւն կ՝ընէ այլ եղած ներուն ալ արժանաւոր դարմանը մատուցանելով Աջը հասնայ իր երախտապարտ կ՝ընէ .

Մենք այս պարտքը կանխիկ վճարելով միամիտ . . .

Յ . Ս . Քէ–բռճեան օղլ :

ԸՆՈՂՋԸՆԸՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ

ԿԵՆԱՑ ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆԸ

Ըստ խոստման մերոյ այս անգամ պիտի խօսինք մարդուս կենաց տևողութեանը վրայ . և այս ամենակարևոր կէտին վերաբերեալ պիտը եղած տեղեկութիւններն աւելի աղէկ ծանկցնելու համար զանազան ծանօթութիւններ պիտի աւելցնենք . որովհետև մինչև հիմայ այս կէտին վրայ ինչ որ խօսեցանք ամէնն ալ մարդուս կենաց տևողութիւնը երկարելու կօգնեն :

Երկայնակեաց անձանց զանազան օրինակներ յառաջ կբերեմք , սովրեցնելու համար թէ ո՛ր կլիմայներու , ո՛ր կարգ մարդոց , ո՛ր տեսակ կազմուածքի

և բարոյականի տեր անձանց մէջ աւելի երկայնակեաց կգտնուին : Այս տեսակ օրինակներն հոս դնելնիս կարծեմ թէ բաւական օգտակար պիտի ըլլայ մեր խնդրոյն , զի սոսկ պիտի յայտնեն թէ ամեն մէկ քաղաքի և ժողովրդոց մէջ գտնուած նեստորները , որոնցմով միանգամայն և պիտի սովրինք թէ մարդուս բարոյականը ի՞նչպէս կազդէ առոր կենաց տեւողութեանը վրայ :

Պատմութեամբ և ասանդութեամբ գիտենք թէ նախնի ժողովուրդք աւելի ուժով , հսկայ , վայելուչ հասակի տեր և միանգամայն աւելի երկայնակեաց էին . ինչպէս Ադամ մեր նախահօրն հասմար կսուի թէ հազար տարիի մօտ ապրեցաւ : Հէնոքէ մանաւանդ կհաստատէ թէ Աբրահամի ատենը մէկ տարին երեք ամիսէ կբաղկանար . և այն Հայրապետեն եաքը ուղիղ ամիսը մէկ տարի կհաշուէին . և այսօր ինչպէս յայտնի է թէ մենք ևս տասներկու ամիսն մէկ տարի : Այս դրութեան ճշմարիտ ըլլալն ասկից կհասկցուի , որ մինչև այսօր Աբրահամեան ժողովուրդք դեռ երեք ամիսն մէկ տարի կհաշուեն , և հետևաբար եթէ զայս ճշմարիտ չընդունինք , չպիտի կրնանք մեկնել թէ ի՞նչու համար ջրհեղեղին եաքը մարդուս ապրելու միջոցը կիսով չափ պակասած է : Այսով և չպիտի զարմանանք թէ ի՞նչու համար նախնի Հայրապետք 60 , 70 և 100 տարեկան եղած ժամանակնին կամուսնանային : բայց այս դժուարութիւնը կանհետանայ , երբոր Հէնոքեան դրութիւնը ընդունինք , վասն զի այն ժամանակը նոյն հաշուով հարիւր տարին՝ երեսունի կվերածի : Այս հաշուով Հին պատմութիւնը բոլորովին ուղիղ կերպարանք մը կառնու , որովհետև ջրհեղեղին առաջ հազար վեց հարիւր տարին այսօրուան չորս հարիւր տասնևչորս տարւոյն կվերածի . և հետևաբար Մաթուսաղային ինը հարիւր տարին այն հաշուով երկու հարիւրի կը վերածի . չորան մը օրն որ բաձարցակապես անընդունելի է , որովհետև մեր օրերն անգամ այս օրինակին մօտեցած բազում օրինակներ կան :

Պատմութիւնն նոյնպէս կասանդէ թէ Ադքատիացի թագաւորները և դիւցազունք միևչև երեք հարիւր տարի ապրած են :

Աբրահամի ժամանակ , ուսկից իվեր պատմութիւնը ստուգութեան կերթայ , երկայնակեացութեան շատ օրինակներ կան որոնք այնքան կարգ գուրս չեն :

Հրեից պատմութիւնը հետևեալները մեզ կսովրեցնէն թէ , Աբրահամ ուժեղ և քաջասիրտ Հայրապետը , որ ամեն բանի մէջ յաջողակ էր մինչև հարիւր եօթանասուն և հինգ տարի ապրեցաւ . Իսահակ իր որդին , որ հանգարտ , պարկեշտ և հեզաբարոյ էր հարիւր երեսուն և եօթը տարի ապրեցաւ : Պատերազմականն Յակոբ երեսուն և եօթն տարի : Եւ Սահա , եզակի օրինակ է , նախնի կանանց մէջ այնքան երկայնակեաց զի մինչև հարիւր քսան և եօթն տարի ապրեցաւ : Վերջապէս Յովսէփ , մարդ խորագէտ , պարկեշտ , քաղաքագէտ , թշուառ երիտասարդութեան մէջ , սակայն երջանիկ երիտասարդութեան ատեն , հարիւր քսան տարի ապրեցաւ :

Մովսէս , չափազանց ուժով և մեծ հանճարի տեր , երևելի մարգարէն , որ քիչ կխօսէր , բայց աշխատասէր և գործունեայ էր , քաշած տանջանաց և նեղութեանց նայելով մինչև հարիւր քսան տարի ապրեցաւ , բայց և այնպէս կրսէր մարդուս կենաց տեւողութիւնը ընդհանրապէս եօթանասուն կամ ութսուն տարի է , ուսկից կհետևի թէ երեսուն դարառաջ , հիմա այսօրուան նման էր :

Յոսուէ , որ գործունեայ և պատե

բազմաեռք էր , հարիւր տասը տարի ապրեցաւ : Իսկ անուն Հայրապետը որ դեր , մեզատոտ էր մինչև հինուսուն տարի ապրեցաւ : Ընդհակառակն Իսկիէն որ Տարսուհիւնը և կենաց հեշտութիւնները կանարգէր , հարիւր տարեկան էր երբ մեռաւ : Հրեից պատմութեան վերջին ժամանակներուն մէջ , երևելի էր Սիմէոն ծերունի բարեպաշտը և Աստուածառերը , որ հինուսուն տարեկան էր մեռած առենը :

Եգիպտացւոց պատմութիւնը որ անթիւ վիպասանութիւնք կպարունակէ , սակայն իրենց նախնի Թագաւորաց տարիքի կողմանէ կարգէ դուրս չափազանցութիւն չկայ : որովհետև Թագաւորաց պահպանութիւնը հազիւ Թ քսան տարի կրտևէր : Նախնի ժողովուրդք Լիսիէնի նայելով , կհաւատային Թէ Սիսեռնները այսինքն այսօրուան Զինացիքըն շատ երկայնակեաց էին : Որոնց միակնունն էր երկայնակեաց , և Լիսիէն , անոնց երկայնակեցութիւնը շատ ջուր խմելնուն կուտար : Այդեօք չայն զօրութեամբն էր , զի չափազանց կերպով զանի խմելու սովորութիւն ունէին այն ժամանակը :

Աթենացւոց մէջ ալ երկայնակեցութեան օրինակներ պակաս չեն : Եւ րևելին Սօլոն , խիստ խելացի , խոհեմ և չափազանց հայրենասերը , որ և ցանկասէր էր , մինչև ութսուն տարի ապրեցաւ : Նոյնպես Պինագրեան ութսուն , այս կարգէն են նաև Սօֆոքլը և Բհնատաւ :

Կուժիաս որ Լէսնթուս , մեծն աստեղաբաշխ , որ շատ ճանապարհորդութիւն ըրած և երիտասարդութիւնը ուսման մէջ անցուցած էր , հարիւր ութը տարի ապրեցաւ : Պտիաի Բիւթագորաս նոյնպես երևելի ճարտարախոս և ճանապարհորդ , հինուսուն տարեկան մեռաւ : Սոկրատ , Ժուժիսլ և բազում. գետ հինուսուն և ութը տարի : Տիմոքրատ երևելի բնագէտը , որ զոլոր իր կեանքը բնութիւնը հետազօտելով անցուց , ութսուն և չորս մինչև հարիւր հինը տարի ապրեցաւ : Սակատապետ և անմոքսը Դիոքինես հինուսուն տարի : Զինոն , սաոյիկեան դրութեան հիմնապետը և որն որ ամեն փիլիսոփայներէն աւելի անձնուրաց էր , ինքզինքը չէր նայեր , բայց և այնպէս մինչև հարիւր տարի ապրեցաւ : Վերջապէս Բլաթոն , ամենէն գերազանց հանճարեղներէն մէկը , բարեհամբ հանգստութեան և իր անձին վրայ ամենայն կերպով խնամք տանողներէն մէկը , ութսուն և մէկ տարի ապրեցաւ : Բիթակօս , որն որ իր աշակերտացը սակաւապետութիւն , կրկին հանդարտութիւն և մարմնամարզութեան կրթութիւններ կքարոզէր , շատ տարիներ ապրեցաւ : Սիկայ մարդուս կեանքը չորս դէմսուր ճիւղերու կբաժնէր : Ա. տղայութիւնը , որ կտևէ մինչև քսան տարի : Բ. երիտասարդութիւն որուն ընթացքն կդներ մինչև քառասուն : Գ. Հասունութիւն՝ մինչև ութսուն տարի : Ա.յս սահմանին անդին Բիթակօս ապրողներն մեռած կհամարէր , որքան որ շատ ապրէին ալ նէ :

Հետեւեալ օրինակներն ալ Հռովմայեցւոց մէջ եղած երկայնակեցութիւնը կյայտնէ :

Պ . Վալերիուս Բուվինուս մինչև հարիւր տարի ապրեցաւ , շատ քաջասիրտ էր , ժողովուրդին շահն կխնամէր և ամեն գործոց մէջ յաջողակ էր : Սուպէլիուս երևելին , նախ պինուոր , յետոյ դպրատան տեսուչ և դասատու , որն որ իր նոր պաշտօնին մէջ պինուորական կրթութեան խստութիւնը կբանեցնէր , մինչև հարիւր տարի ապրեցաւ : Ֆապիուս անուանեալին յաջորդէ , հինուսուն տարի ապրեցաւ : Վերջապէս Քաթոն , առոյգ , աւելի վայրենութիւն կսիրէր և

հետևաբար բժիշկները կանարգեր, ինչ նուսան տարի ապրեցաւ։

Հռովմայեցի կանանց մէջ երկայնակեցութեան օրինակներ կան, ինչպես Թէռենթիա, Կիկերոնի կինը հարիւր երեք տարի ապրեցաւ. իւր Թըլլուսառութեանցը, վշտերը, տառապանքը և յոգնաւութեանը հակառակ։ Լիւղի Թագուհին, ամբարտաւան, ցանկացող և միշտ ելջանիկ կինը, մինչև ինն նուսան տարի ապրեցաւ։

Հռովմայեցւոց պատմութիւնը կը տվնեցընէ նաև մեզ որ, նախնի դերասանուհեաց մէջ երկայնակեցութեան շատ օրինակներ կային, Թէ և այսօր գժբաղդաբար պրեթէ չկան, որն որ կ'ապացնէ նաև Թէ նախնի ատեն այս արհեստին նուիրահանելն այսօրուան չափ կենաց սպառում չունէին։ Լուղիա, տղայութենէն դերասան եղաւ, ամբողջ դար մը իր արհեստին ծառայեց, և մինչև հարիւր տասներկու տարեկան եղած ժամանակը տեսարանի մէջ կնեռկայանար։ Կալէռիա Փօբիանա դերասան և պարող, Բօմբէն ընդհատուելու համար Թատրոնի մէջ ներկայ ոգումն տուած առնին ինսուսան տարեկան էր, ուսկից շատ եռքը դարձեալ երևցաւ Օկիավեի գահակալութեան ժամանակը։

Ընդհ, Աֆրիկեան կայսեր ժամանակ, վաճառական և պաշտօնական աղբիւրէ քաղելով, այսինքն Ժողովրդոց տնտեսութեան արձանագրութենէն երկայնակեցութեան օրինակներ գտած է։ Այս համարին ատենը, որ մեր Թըլլականին եօԹանասուն և ինն էր, Լուսլոյ Սբենիսէն մինչև Բօի մէջ 184 անձանց մինչև հարիւր տարի ապրելն տեսնուած է։ Ինչպես յիսուն և չորս հոգի մինչև հարիւր, յիսուն և եօԹն մինչև հարիւր տասն. երկու մինչև հարիւր քսան և հինգ տարի. չորս հոգի մինչև հարիւր երեսուն, չորս ալ հարիւր երեսուն և հինգին մինչև հարիւր երեսուն և եօԹն. երեք ալ մինչև հարիւր քառասուն։ Այսոցմէ զատ Բատմայի մէջ երեք մարդիկ կային, որոնք մինչև հարիւր քսան տարի ապրեցան և երկուք ալ մինչև հարիւր երեսուն։ Բիզանսի մէջ ուրիշ մէկը մինչև հարիւր երեսուն, և Ֆանկալ մէջ կին մը որ մինչև հարիւր երեսուն երկու տարի ապրեցաւ։ Ընկզանսի մօտ, Վելնազիում ապրանեալ բոլոր քազաքին մէջ վեց հոգի մինչև հարիւր քսան տարի, և ուրիշ չորսեր ալ մինչև հարիւր քսան և հինգ տարի ապրելնին տեսնուած էր։

Մեծն Իւլբիհնի երկայնակեցութեան օրինակներն և հետևաբար նախնեաց ապրելու սահմանը, մեր ժամանակներուն հետ բոլորովին կհամաձայնի։ Ասոր կսովրիմք նաև որ Հին Հռովման, Լօնտրայի կնմանի երկայնակեցութեան կողմանէ։

(Շարունակելի։)

Փոթիղ, Ախսանեայ լրագրոյն Սեպտեմբեր 12, 75 երդ Թուոյն մէջ հետևեալը կկարդամք։

Մենք մեր կողմանէ վերոյիշեալին վրայ առանց և մէկ խօսք մ'աւելցընելու, սա միայն կյիշեմք որ անշուշտ ամեն Հայ սիրտերն պիտի ջանան ըստ կարի մասնակից ըլլալ ազգասիրաբար և մարդասիրաբար այս ազգօգուտ ձեռնտուԹեանս, ուստի հրապարակաւ մեր շնորհակալուԹիւնը կմատուցանեմք Հայրենասէր Կարապետ Վարդապետի Շահնազարեանց և Պանպասեան Նորին հետևողացն։

Սախմագիրն

Փոթիղ 10 Սեպ" 1862։

Սիրելի Պատն Մուրատեան։

Ազգային և օտար լրագիրներուն մէ-

ձանաձք , որ մեր եղբարց արիւնն դարձեալ հոսել սկսեր է այն հողերու վրայ , ուր հինգ հարիւր տարի առաջ մեր ինքնիշխանութեան և փառաց դրօշակն կը ծածանէր ։

Մարաշի Հայերն Թրքաց սրով կոտրտուեցան . Թերևս Զէյթունի և այլ Հայաբնակ գիւղերու և քաղաքներու մէջ ալ մեր ողբերգի համազգիներն նոյն ցաւալի օրհասին հանդիպեր են կամ պիտի հանդիպին . ո՛վ գիտէ Թէ սպանդուածներու անուներ ընտանիք այսօր ինչ խղճութեան մէջ են ։

Թրքաց բարբարոսութեան գարձի կամ բարձի համար աղօթք կընեմ ; Մեր Մարաշի ողբերգի կատարեալ ապացոյց անվիճելի ընտանեաց առօրեայ միխիթարութիւն հասցնելոյ համար ես յիսուն ֆրանգ կատարգրիմ , իբրև Աւետարանի այրին , և հրաւէր կընեմ բոլոր մեր ազգայնոց , որ հաճին իրենց առատաձեռնութեամբն օգնութեան հասնիլ , իւրաքանչիւր ոք իր կարողութեան և մարդասիրական զգացմանց համեմատ ։

Նուէրքն ուղղուին պիտի (rue de l'Est 19 ,) առ իս . ողբերգութիւն ժողովելոց վերակացուքն են Պ . Վ . Թոքաօղ Լանկլուայ , Պ . Պ . Նորատունկեան , Պ . Ռ . Ժիլկ Թագաւորեան , Պ . Մուրատեան և կարապետ Վարդապետ Շահնազարեանց ։ Իւրաքանչիւր անձի նուէրքն հրատարակուի պիտի յանուանէ կամ անանուն՝ Փարիզի էջերուն մէջ , նոյնպես ալ Հետզհետէ Ալիկիայի ազգայնոց ուղարկելիք գումարներու ցուցակն ։

կարապետ Վ . Շահնազարեանց ։

Սրժանապատիւ կարապետ Վարդապետին այս ազգասիրական և մարդասիրական առաջարկութեան և տուած օրինակին յուսամք Թէ ամեն Հայ պիտի փութայ առատաձեռնութեամբ պատասխանել ։

Սրդարև ապամանդէ սիրտ ունենալու է մարդ որ չզրօսվի այսպիսի ժողովրդի մը վրայ , որ հպատակ լինելէն իվեր ամենևին բարեբաստիկ օր չէ տեսած և ո՛չ ամենափոքր իմանքի իւր բարեկացութեանը համար , որ միշտ ահ ուզողով ապրեր և անքաւ գոհեր ըրեր է , երբեք քաղաքացիութեան իրաւունք չէ վայելեր , միշտ կեավառ և այլն կոչուելով նախատուեր է իւր քրիստոնեական կրօնքին համար , և հիմայ , իբր լրումն այս ամենայն բարեմասնութեանց (համ՝ Թշուառութեանց) , իւր կեանքը չարաչար զոհ կերթայ մահմետական անկրթութեան ։

Սկիւ Հայոց կրթողնեք դառնալ , Թէ ո՛րչափ կարևոր է այնպիսի դառն ճակատագիր ունեցող ազգայնոց նպաստ մատուցանել , և կապասեմք տեսնել իրենց առատաձեռնութիւնը , որ ուրախութեամբ պիտի հրատարակեմք լրագրոյս մէջտեղ ։

Լրագրոյս մամուլը դրուելու կէտին՝ Սրժանապատիւ Կ . Վ . Շահնազարեանց հաղորդեց մեզ մինչև յարդ ատորագրելոց ցանկը , որ վաղը կդնենք , և իմացուց Զեռնատուութեան Սեզանին բարի գիտաւորութիւնը , որ և ժամ յառաջ գանէ հինգ հարիւր ֆրանգի առաջին գումար մը ծասցընել այն Թշուառ ժողովրդեան մէջ վճռած այրիներուն և որբերուն . որպես զի ձեռք վրայ չը հասած կարենան իրենց ամենէն հրատապ պիտոյքը հոգալ ։

Փափաքելի է որ ամեն քաղաքաց Հայերն այսպես մէյմէկ Սեզան Զեռնտուութեան կազմին և ջանայնոյն խրոխճալեաց համար ողբերգութիւն հաւաքել և խրկել Փարիզ , վերի նամակին մէջ դրուած հասցէով , որ ասկէ ապահով կերթայ մեր Թշուառացեալ ազգայնոց ։

Ահաւասիկ մինչեւ ցարդ ստորագրեալ գումարը ՝

Տ· Կ· Վ· Շահնազարեանց	ֆր· 50
Պ Պ· Պաղտասար Նորատունկեան	50
Բժիշկ Թագաւորեան	50
Աբրահամ Ֆրէնկեան	20
Բժիշկ Ռ· Նատիրեանց	100
Գրիգոր Կոստանդեան	200
Անձնական Անձ մի	20
	490

ԾԱՆՈՒՑՄՈՒՆԳ

ԳՈՒԼԻԷԼՄՈՍ ԹԷԼ

ԿԱՄ

ԱԶԱՏՈՒՄՆ ՉՈՒԻՑԵՐԻՈՑ

Այս անուամբ 130 երեսէ բաղկացեալ գեղեցիկ տետրակ մի է, որուր Մեծարգոյ Ա· Ձանմեան ուսումնական Երիտասարդը իւր աշխատասիրութեամբը Գաղղիերէնէ Թարգմանելով՝ ի լոյս ընծայած ՝ է Ըստ, պատմական վիպասանութեանց մարդկանց վրայ ինչ աղդեցութիւններ ունենալը լաւ գիտնալ, մեր խորին շնորհակալութիւնը հրատարակուհուս Աբժանայարդ Թարգմանչին մատուցանելով, կ՚քաջալերենք զինքը որ բարեհաճի իւր սիրելի Անգին ալ ատենի և ընտիր ծառայութիւններ ընելու ՝

Ընծայուի ամեն Հայ գրավաճառաց քով գին 5 ղուրուշ ՝

ԳԻՄԱԿ ԵՒ ՉԵԳԻՒՌ

ՆՈՐ ՕՐԱԳՐՆԵՐ

Առաջինը, Չմիւռնիոյ ուսումնական հրիտասարդներէն Մեծարգոյ Ա· Կ· Տէմէճեանի խմբագրութեամբը, օգոստոս 1 էն սկսեալ հրատարակի ամեն ամսու 1 ին և 15 ին ՝ վեց ամեայ չորեքին գինն է Չմիւռնիոյ մէջ երկու և դուրսերը 2 ½ արծաթ դէֆթ ՝

Երկրորդը խմբագրութեամբ Մեծարգոյ Պ · Մինաս Մ· Հայկ Գափամաճեանի, օգոստոս 1 էն սկսելով հրատարակի ամեն ամսու 1 ին և 15 ին ՝ վեց ամեայ չորեքին գինն է 2 արծաթ դէֆթ ՝

Կ · Պոլսոյ մէջ երկուքին ալ ստորագրութեան տեղին է, Գալաթիայ խանդրանը մէջ թիւ 4 օրագրաց Գործակատարին գրասենեակը ՝

ՆՈՐ ԵԻ ԳԵՂԵՑԻԿ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Այս մօտ օրերս Փարիզէն բերուեցաւ կճախուին Զուլուաէ խանին դիմի թիւ 4 նոյն իսկ Փարիզի գրատունը ՝

Անոնց մէջ կան՝ քաղաքներու, այլ և այլ տեսարաններու, բազմատեսակ ծովային և պատերազմական նաւերու դեղեցիկ նկարներ հին և նոր պատմութիւններէ առնուած ՝